

**ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԴԱՀԱՆՋԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

ՀՀ քաղաքացի Վարդան Խաչատրյանը դեռևս 28.06.2010թ. «Վնասը փոխհատուցելու պահանջի մասին» հայց էր ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, որով պահանջել է հատուցել իր կրած նյութական վնասը, ինչպես նաև իր կրած ոչ նյութական (բարոյական) վնասը՝ այն հիմնավորմամբ, որ «Վարդան Խաչատրյանը բացի իրական վնասից, որ կրել է, այլ ապրումներ է ունեցել՝ սպասելով դատական կարգով իր գործի լուծմանը: Այդ անորոշությունը, որ տևել է ընդհանուր իրավասության դատարան դիմելուց մինչև Սահմանադրական դատարանի դատական ակտի կայացումը, իր նկատմամբ դատարանների կողմից ՀՀ Սահմանադրությանը հակասող օրենքի դրույթների կիրառումը, իր արդար դատաքննության իրավունքի խախտումը, հոգևոր տագնապ և անհանգստություն է պատճառել նրան: Վարդան Խաչատրյանը այդ հոգևոր տագնապը և անհանգստությունը չէր կրի (հետևանք), եթե նրա իրավունքը չխախտվեր (պատճառ)»:

Վարդան Խաչատրյանի մահից հետո ընդհանուր իրավասության դատարանը Արթուր Խաչատրյանին ճանաչել է հայցվոր Վարդան Խաչատրյանի իրավահաջորդ և իր՝ 02.05.2012թ. վճռով ոչ գույքային (բարոյական) վնասի հատուցման պահանջի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճել է այն պատճառաբանությամբ, որ «*Ի տարբերություն նյութական վնասի, բարոյական վնասը ՀՀ օրենսդրությունում չունի իր կարգավորումը: Ավելին, չնայած այն հանգամանքին, որ այն ՄԱԿ-ի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով և Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի նոյեմբերի 4-ին ընդունված կոնվենցիայով նախատեսված է, ՀՀ քաղաքացիական իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրական նորմերում բացակայում է բարոյական վնաս հասկացությունը*»: Դատարանը նաև արձանագրել է, որ՝

«Բարոյական վնասի, որպես վնասի տարատեսակի, հատուցումը ևս պատասխանատվության տեսակ է, որը պարտադիր պետք է սահմանվի օրենքով», իսկ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով»: Բացի այդ՝ «Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության նորմերի անմիջականորեն գործելու և բարձրագույն իրավաբանական ուժ ունենալու հատկանիշները (ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի ուժով)՝ դատարանը գտնում է, որ բարոյական վնասի հատուցման ինստիտուտը չի կարող կիրառվել դատարանի կողմից, քանի դեռ առկա չէ դրա սահմանումը, կարգավորումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ»: Վերոգրյալի հիման վրա էլ դատարանը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունից հոգուտ Վարդան Խաչատրյանի 2,000 եվրոին համարժեք ՀՀ դրամ՝ որպես բարոյական վնասի հատուցում պահանջելու մասով, քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման, քանի որ ՀՀ քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը բարոյական վնասի հատուցումը որպես պատասխանատվության տեսակ չի նախատեսում, որպիսի հիմքով վեճը ենթակա չէ դատարանում քննության¹:

Վերաքննիչ դատարանը նույն պատճառաբանությամբ բարոյական վնասի հատուցման պահանջի մասով բերված բողոքը մերժել է, իսկ Վճռաբեկ դատարանը վերադարձրել է վճռաբեկ բողոքը:

Քաղաքացի Արթուր Խաչատրյանը 03.04.2013թ. դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան: «Քաղաքացի Արթուր Խաչատրյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Բարձր դատարանն իր 05.11.2013թ. ՍԴՈ-1121 որոշումով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, այնքանով, որքանով բարոյական վնասը չի դիտում որպես վնասի տարատեսակ

¹ Տես՝ թիվ ԵԿԴ/1320/02/10 քաղաքացիական գործը

և չի ապահովում բարոյական վնասի փոխհատուցման հնարավորություն՝ արգելափակելով անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը, միաժամանակ խոչընդոտելով ՀՀ միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարմանը, ճանաչել է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասին, 16-րդ հոդվածի 4-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին, 43-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող և անվավեր:

Սահմանադրական դատարանն արձանագրել էր, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված են բարոյական վնասի նյութական փոխհատուցման բազմաթիվ դեպքեր, սակայն նշված ինստիտուտն ամբողջական կանոնակարգման ենթարկված չէ, ինչը թույլ չի տալիս օրենսդրական ներդաշնակություն ապահովել նման վնասի նյութական փոխհատուցման դեպքերի, հիմքերի և կարգի կանոնակարգման հարցում: Դա էլ իր հերթին, խոչընդոտում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությանը: Ավելին, նշված իրավիճակը չի կարող համահունչ համարվել ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթին, ըստ որի՝ *«Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:*

ՀՀ Ազգային ժողովը 19.05.2014թ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի մի շարք հոդվածներում կատարեց փոփոխություններ և լրացումներ՝ տալով ոչ նյութական վնասի հասկացությունը և հատուցման կարգին ու պայմաններին վերաբերող օրենսդրական սահմանումները²:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում ոչ նյութական վնասը ամրագրվել է որպես վնասի տեսակ: Իսկ նույն օրենսգրքի 162.1 հոդվածով սահմանվել է ոչ նյութական վնասի հասկացությունը և դրա հատուցում, ըստ որի քաղաքացիական օրենսգրքի իմաստով *«ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին ի ծնե*

² <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=33499>

կամ օրենքի ուժով պատկանող ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող կամ նրա անձնական ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ»: Ինչ վերաբերում է հատուցմանը, ապա օրենքով նախատեսված է, որ «Եթե դատական կարգով հաստատվել է, որ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով ֆիզիկական անձի նկատմամբ թույլ է տրվել «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 2, 3 կամ 5 հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտում (սույն օրենսգրքի իմաստով՝ կոնվենցիոն իրավունքների խախտում), ապա այդ անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում՝ նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում»: Իսկ «եթե դատապարտյալն արդարացվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3 հոդվածով նախատեսված պայմաններում, ապա նա իրավունք ունի դատական կարգով պահանջելու իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցում (սույն օրենսգրքի իմաստով՝ հատուցում անարդարացի դատապարտման համար)»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ավելացվել է նաև նոր հոդված՝ 1087.2, որով կարգավորվում է կոնվենցիոն իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման կարգը և պայմանները: Ըստ այդմ էլ, ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման՝ անկախ հատուցման ենթակա գույքային վնասից, անկախ վնաս պատճառելիս պաշտոնատար անձի մեղքի առկայությունից:

Ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշում է դատարանը՝ ողջամտության, արդարացիության (equitableness) և համաչափության սկզբունքներին համապատասխան: Ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշելիս դատարանը հաշվի է առնում ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի բնույթը, աստիճանը և տևողությունը, պատճառած վնասի հետևանքները, վնասը պատճառելիս մեղքի առկայությունը, ոչ նյութական վնաս կրած անձի

անհատական հատկանիշները, ինչպես նաև այլ վերաբերելի հանգամանքներ: Այն հատուցվում է պետական բյուջեի միջոցների հաշվին:

Հատուցման չափը չի կարող գերազանցել՝ 1) նվազագույն աշխատավարձի հազարապատիկը՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 2 կամ 3 հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտման պարագայում, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում. 2) նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 5 հոդվածով երաշխավորված իրավունքի խախտման պարագայում:

Ոչ նյութական վնասի հատուցման չափը բացառիկ դեպքերում կարող է գերազանցել նախատեսած առավելագույն սահմանը, եթե պատճառված վնասի արդյունքում առաջացել են ծանր հետևանքներ:

Հատուցման պահանջ կարող է ներկայացվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված խախտումը հաստատող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

Վերը նշված փոփոխություններն ուժի մեջ են մտել 2014թ. նոյեմբերի 1-ից:

Գրիշա Բալասանյան

ՀՀ փաստաբանների պալատի

երիտասարդական խորհուրդ